

15247

352

U-24

1934

36

ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՅԵՔ

ԳԵՂԱՄ ԱՋԻՋՅԱՆ

ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ
ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ

(ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ 9-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏՎԱԾ ԶԵԿՈՒՅՈՒ-
ՄԵՑ, ՇՐՋԳՈՐԾԿՈՄԻ 3 ՃԵՎ ԿԵՍ
ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

2010

352
Ա-24

1934 թ.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

352

Ա-24

ԴԵՂԱՄ ԱԶԻԶՅԱՆ

(Ղամարլվի Երզրոծկոմի նախագահ)

**ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ
ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ**

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ 9-ՐԴ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ՏՎԱԾ ԶԵԿՈՒՑՈՒ-
ՄԻՑ, ՇՐՋԳՈՐԾԿՈՄԻ 3 ՑԵՎ ԿԵՍ
ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ)

9050 2001





«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄԳ»-Ի ՀԱՎԵԼՎԱՆ

ՂԱՄԱՐԼՈՒ «ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄԳ»-Ի ՏԳԱՐԱՆ ՏԻՐԱԺ 100

50899-Ա.Ն.

ՄԻՅՏ ՎԵՐԵԼՔԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր

Անցած համազումարից անցել և արդեն 4 տարի Այդ չորս տարում, ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես և Անդրկովկասում ու Հայաստանում լեղել են բռնու վերելքի ու հաղթանակի տարիներ-մեր ժողովրդական տնտեսության վերակառուցման բոլոր բնագավառներում, թե արդյունաբերության բնագավառում, թե գյուղատնտեսության բնագավառում, թե կուլտուրական հեղափոխության բնագավառում, թե լեռկերի պաշտպանության բնագավառում, Հաշվետու ժամանակաշրջանումն էր, վոր մեր կուսակցության և նրա սիրելի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ հմուտ ղեկավարության մեջ հաղթանակով ավարտեցինք առաջին 5-ամյակը և ձեռնարկեցինք 2-րդ 5-ամյակի հույսալից տարիներ կառուցմանը: Այդ տարիներն էր, վոր շնորհիվ լեռկեր ինդուստրացման Լենինյան քաղաքականության անշեղ կիրառման, մենք հաջողության հաղթանակելով բազմաթիվ դժվարություններ- ավարտեցինք սոցիալիզմի հիմքի կառուցումը, մեր լեռկերը հետամնաց ազդարարին լեռկերից դարձնելով առաջավոր ինդուստրիալ, բարձրագույն տեխնիկայի լեռկերի: Անցած այդ չորս տարիները մեր գյուղատնտեսության բնագավառում հանդիսացան գյուղի սոցիալիստական վերակառուցման, կոլտնտեսական կարգերի հաստատման ու ամրացման տարիներ: Կուսակցության գծի անշեղ կիրառման շնորհիվ մեր գյուղատնտեսությունը ցածր ու ցրված հատմանց գյուղատնտեսություններից այժմ արդեն վերածվել և աշխարհի խոշորագույն գյուղատնտեսության: Վողջ միության մեջ կոլտնտեսությունների բնագավառում են աշխատավորական տնտեսությունների ավելի քան 65 տոկոսը, վորոնք իրենց մոտ են պահում ցանքի 85 տոկոսը:

Կուլտուրական հեղափոխության բնագավառում հույսալից մեր լեռկերի տնտեսության անախրճից բարձրացման հետ գուցենթաց մենք ունեցել ենք վիթխարի նվաճումներ:

Այդ տարիներումն էր, վոր մեզանում հաջողությամբ կիրառվեց պարտադիր ուսուցումը՝ գրեթե վերացվեց անգրագիտությունը, հեկայական ծավալ ստացավ կրթն, թատրոնը, և վորը գլխավորն է, վիթխարի չափով աճեցինք մասսան կուլտուրական՝ հետևապես նաև նրա կուլտուրական պահանջները, վորոնք իրենց հերթին կուսակցության ու կառավարության

առաջ դնում են նոր ու վիթխարի խնդիրներ մասսաների կուլտուրական սպասարկման գործը բարձր, կապիտալիստական յերկրներում անհասանելի աստիճանի բարձրացման համար: Յերկրի ինդուստրացումն ու կուլեկտիվացումը ել ավելի աճել ամբողջել, անհաղթելի յե դարձել մեր յերկրի պատմության գործը:

Ընկերներ մեծ են մեր նվաճումները-հաղթանակները և այդ բոլորը մեկ առ մեկ թվարկել հնարավոր չե և իմ խնդիրն ել չե: Նախկին հետամնաց Ռուսաստանը այժմ արդեն դարձել է անճանաչելի: Դրա մասնակի, բայց, փալլուն ապացույցը կարող ե լինել, Միության անբաժանելի մաս կազմող՝ Հայաստանը:

Շնորհիվ ԼՆԵՆԻՆՅԱՆ-ՍՑԱԼԻՆՅԱՆ ազգային քաղաքականության, այժմ արդեն Միության մյուս մասերի հետ միասին, Հոյատառնը ևս անճանաչելի յե դարձել, հետամնաց, գյուղատնտեսության յերկրից վերածվելով առաջավոր ինդուստրիալ ազգաբախն յերկրի, գյուղատնտեսության, մշտական աղքատության սե կարիքի յերկրից վերածվեց կոլեկտիվ խոշոր գյուղատնտեսության, ունեվոր կուլտուրական կյանք կառուցող յերկրի, պարագիւր ուսման, բարձր կուլտուրա ստեղծող առաջավոր յերկրի: Այդ բոլորն, ընկերներ, իհարկե ինքնահոսով չե, վոր ձեռք են բերված: Այդ բոլորը ձեռք են բերված համառ պայքարի-միջոցների նվիրված աշխատանքի շնորհիվ: Այդ բոլորը ձեռք են բերված և կատարված կատաղի դասակարգային պայքարի պայմաններում, այլ բոլորը ձեռք են բերված միմիայն և միմիայն ջարդ ու փառք անելով դասակարգային թշնամու դիմադրութունը, նրա ագենտների աջ ու ճճախ՝ օպորտունիստների դիմադրութունը, վորոնք ամեն քալլափոխում դժվարութուններ ելին հորուցում և փորձում արդելալի մեր ոոցիտլիստական հաղթարշավը:

Այդ վիթխարի նվաճումներից, վորոնք պետք ե ամփոփեն Հայաստանի 9-րդ, Անդրկովկասի 7-րդ և Միության 7-րդ համագումարները, անմաս չի մնացել նաև մեր շրջանը: Հայաստանի ընդհանուր վերելքի հետ գուզընթաց աճել ու ամբացել է նաև մեր շրջանը թե տնտեսապես և թե կուլտ-կենցաղային ու այլ բնագավառներում: Թուլլ տվեք ընկերներ անցնել մեր շրջանում այդ նվաճումների խնդիրների քննարկմանը ըստ բնագավառների:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Ինչպես հայաստանում, նույնպես Ղամարուլի շրջանում իտերիդային իշխանութունը ժառանգութուն ստացավ քալքայված հետամնաց գյուղատնտեսութուն: Հաակապես պատերազմի և ազգամիջյան կռիվների շրջանում, դաշնակցության տխրահրուչակ պետության որոք ծալք աստիճանի քալքայման հասավ մեր շրջանի գյուղատնտեսութունը, մասնավորապես կուլտուրական բույսերի և բազմամիա կուլտուրաների գծով: Այդ պայմաններում արդեն խոսք չեք կարող լինել այգիների, պողատու ծառերի անցման ու մշակության մասին: Իրպեսիտլիստական և աղգամիջյան պատերազմների հետևանքներից Ղամարուլի շրջանում փչացան հազարավոր հեկտար պողատու այգիներ: զբ-բեթե բոլորովին վերացվեց բամբակի մշակութունը, կրճատվեց բերքատվութունը անասնի չափով: Այդ բոլորին վորպես հետևված հասկանալի յե, որեցոր վատթարանում, ծալք չգավոր դրության մեջ եր ընկնում աշխատավոր գյուղացիութունը, նա վոչ միայն ցարիզմի ու մաուկերիզմի լծի տակ տառապում և, քաղական ու իրավական զրկանքներ եր կրում, այլ և զրկված լինելով արտադրական միջոցներից, ինչպես և մի կտոր այգի մշակելու հնարավորութունից, դրան ավելացնեք նաև այն, վոր նա հնարավորութուն չունեք եղտվելու անգամ իր ջրը տինքով ստացված չափազանց նվազ բերքից և հլուծվում եր ծալք չգավորության մեջ և միայն խորհրդային իշխանության հաստատումից հետո յե, վոր աշխատավոր գյուղացիութունը լայն հնարավորութուն ստացավ վերականգնել գյուղատնտեսութունը, բարձրացնել դաշտերի բերքատվութունը և վալելի իր աշխատանքի արդունքը:

1920 թ. խորհրդայնացումից անմիջապես հետո՝ գյուղացիության տնտեսական կարողութունը սկսեց լավանալ, աշխատավորութունը սկսեց մշակության գնել, տարիների ընթացքում անմշակ խոպան հողերը և փչացած այգիները: իտերիդային կառավարության ամենալայն աջակցությամբ ու ոգնությամբ աշխատավոր գյուղացիութունը վոչ միայն կարողացավ ամենակարճ

ժամանակամիջոցում—մինչև 27-28 թ. վերականգնեցին զուգա-
տեղանությունը, այլ և առաջ և անցել, ել ավելի բարձրացնե-
լով նրա բերքատվությունը, մեքենայացման լենթարկելու, վե-
րակառուցելու արմատապես: Իսկ գյուղատնտեսության վերա-
կառուցման այդ պատմական մեծ խնդիրը լուծելու միակ ճիշտ
ճանապարհը դա գյուղատնտեսության կոլեկտիվացման ճանա-
պարհն է, նախկին ցածր ու ցրված տնտեսությունների բազայի
վրա վերակառուցված, մեքենայացված գյուղատնտեսություն
ստեղծել, ուր հնարավոր լինի գյուղատնտեսությունը վարել
գյուղացիության վերջին խոսքի հիման վրա, պլանային կախով հնա-
րավոր չնայած Մեզ անհրաժեշտ էր վերականգնել ամենից առաջ
հենց այդ տնտեսությունը բնույթը, ստեղծել խոշոր հողագործական
տնտեսություններ, իսկ այդ ուղին, ինչպես ասացի, վոր ցույց
տվել է մեզ մեր մեծ ուսուցիչ ընկ. Լենինը, վորով հանձարեղ
վարպետությամբ առաջագործել մեզ մեր առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻ-
ՆԸ—Յեվ անա ընկերներ մեր գործկոմի գործունեության շըր-
ջանը զուգակցվում է հենց այդ աշխատանքներին, այդ մեծ գոր-
ծի համար մղած պայքարի տարիներին,—30—34 թվերին, ինչ-
պես վոչլ միության մեջ, նույնպես և մեզ մոտ գյուղատնտեսու-
թյան վերելքի տարիներ հանգիստացան:

2. ԿՈԼԵԿՏԻՎԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կոլեկտիվության քաղաքականության ճիշտ կիրառումը
գյուղատնտեսության սոցիալիստական վերականգնման բնա-
ղավառում, ինչպես միության մեջ, նույնպես և մեզ մոտ, մեր
շրջանում տվեց խոշորագույն արդյունքներ, կոլտնտեսության
կարգերը հիմնովին ակրացել են գյուղատնտեսության մեջ,—
գյուղացիական անհատական փոշիացած տնտեսությունները,
վորոնք չոր ավուր, ժամ առ ժամ սնում էին կապիտալիզմը,
(Լենին) ներկայումս վեր են ածվել խոշոր սոցիալիստական
տնտեսություններ, կոլեկտիվ տնտեսություններ:

Մեր շրջանի կոլեկտիվացումը վերջին 4 տարում, ըստ տա-
րեթվերի ունի հետևյալ պատկերը՝

Տարիներ	Քանի կոլտնտե- սական թ. և յեղել	Ընդգրկված տեղ- տնտեսություննե- րի թիվը	Կոլեկտիվացման տոկոսը առ 1 հոկտ. 1934 թ.,
1931 թ.	65	6935-272	64.7
1932 »	67	6889	64.4
1933 »	67	7142	66.74
1934 »	69	7837	73.15

Ինչպես լերևում է այս աղյուսակից, կոլեկտիվացումը (32
թ. 31 թ. համեմատությամբ իշել 60,3 տոկոսով, դա բացառվում
է նրանով, վոր կոլտնտեսություն թցկվել էին բավականին թվով
կուլակային տարրեր, վորոնց վտարել են կոլտնտեսություններից:
31 թ. համեմատությամբ, կոլտնտեսությունը հիմնականում կու-
լակային տարրերից մաքրվելուց հետո 33 թ. աճել է 2 տոկո-
սով, առ մեկը 7-րդ ամսին 34 թ. աճել է 3,8 տոկոսով: Ընկեր-
ներ մեր շրջանի կոլտնտեսությունների թիվը պակասում է 5-ով,
ինչպես գիտենք Չարբախների 5 գյուղերը հանձնել ենք Յերևյա
նին, մեր շրջանում այժմ ունենք 64 կոլտնտեսություններից
7318 սոցիալիստական տնտեսություններով: Գյուղատնտեսու-
թյան վերականգնումը չի սահմանափակվում սոցիալիստական
տնտեսությունների միացումով, այլ կոլտնտեսությունների աճ-
ման ու ամրապնդման հետ զուգընթաց աճել է սոցիալիստական
հատվածի ցանքային տարածությունները, ինչպես ցույց է տա-
լիս հետևյալ աղյուսակը՝

Կոլտնտես	1931 թ.		1932 թ.		1933 թ.		1934 թ.	
	տար. տոկ.	տար. տոկ.	տար. տոկ.	տար. տոկ.	տար. տոկ.	տար. տոկ.	տար. տոկ.	տար. տոկ.
Բամբակ	2811	47	5280	68	5034	66,4	3753	75,03
Հացահ. և այլ կ	1207	—	2672	—	4058	88,28	5143	82,67

34 թ. 5143 հեկտար հացահատիկի և այլ ցանքերից,
բացի կոլտնտեսություններում, ցանված է նոր ավույն 589
հեկտար, կոլտնտեսությունների բամբակենու տեսակաբար կշի-

ը 31 թ. 47 տոկոսից, 34 թ. բարձրացել է 75,2 տոկոսով, հա-
ցարաւսների և այլ կուլտուրաների ցանքների տարածութիւնը
31 թ. համեմատութեամբ 32 թ. աճել է 204,4 տոկոսով, 33 թ.
աճել է 310,4 տոկոսով, 34 թ. 394 տոկոսով, վերջինում չի հաշ-
ված նոր ցանված լենթացանքս 589 հեկտար առկուլտը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ ՇՐՋԱՆՈՒՄ

Ղամարուլի շրջանի գյուղատնտեսութեան զարգացումը
ամբողջութեամբ առած ունի հետևյալ պատկերը՝

Շրջանի ընդհանուր տարածութիւնն է 36788 հեկտար, վո-
րից բնակավայրեր 2702 հեկտար, վարելահողեր շրջի 13915
հեկտար, վարելահողեր անջրտի 2056 հեկտար, այգի 3728 հեկ-
տար, խոտհարք 225 հեկտար, մաքուր արոտատեղեր 677 հեկ.,
արոտ քարքարոտներ 4034 հեկտար, անպետք հողամասեր 3856
հեկտար, այդ տարածութիւնների մեջ է մտնում նաև կոնսերվի
զոնան

Շրջանի հիմնական կուլտուրաների զարգացումը հետևյալ
պատկերն է ներկայացնում՝

Տարեթիվ	Փաստորեն ցանված է	Բերքատու տարած.	հանձնված բերքը տոն	միջին բ. ցենտներ	Ծանոթ.
1931 թ.	5968	5637	3598	6,38	
1932 »	7770	7570	3342	4,54	
1933 »	7544	6731	3851	5,08	
1934 »	5000	4936	3591	7,42	

Իրական, զգալի չափով բարձրացել է բերքատուութիւնը:
1934 թ. բերքատուութիւնը սպասվում է վոյ պահաս 8 ցենտ-
ներից, պլանով տրված 6—7 ցենտների գիմաց: Ինչպես ցույց
է տալիս աղյուսակը, 1933 թ. 6634 հեկտար բերքատու տարա-
ծութիւնից հանձնված է 4450 տոննա բամբակ, մինչդեռ 1932
թվին 7570 հեկտար բերքատու տարածութիւնից հանձնված է
3342 տոննա, չնայած 1932 թ. բամբակենու մեծ տարածութիւն-
ը, այնուամենայնիւ 33 թ. ավելի քիչ տարածութիւնից բո-
տացվեց ավելի շատ բերք, 1933 թ. համեմատած 34 թվի հետ
բամբակենու բերքատուութիւնը իջել է 9,54 ցենտներով, սակայն
32 թվի համեմատութեամբ բարձրացել է այն 1,26 ցենտ., իսկ

սոցիալիստական սեկտորում բերքատուութեան բարձրացումն
լեղել է . . . ցենտ. 1934 թ. միջին բերքատուութեան չափը
վորոշված է 7,42 ցենտներ, փաստորեն ավելի բարձր է բերքա-
տուութիւնը 1931 թ. համեմատութեամբ, ավելի լի 1,4 ցենտնե-
րով, այդ բոլորը շնորհիվ կուլտիցութեան ու կառավարութեան
ձեռք առած միջոցառումների կուլտնտեսութիւնների անտեսա-
պես, քաղաքականպես և կազմակերպչորեն ամրապնդման, կու-
լակային տարրերի կուլտնտեսութիւններից վտարման հետևան-
քով ամրացել է աշխատանքային կարգապահութիւնը, ամրացել
է ավելի դիտակցական վերաբերմունքը կուլտնտեսականի մեջ,
դեպի կուլտնտեսութեան արտադրողականութիւնը և մյուս կող-
մից աշխատանքային միջոցների ժամանակին և կանոնավոր կիւրա-
մանը:

Բերքատուութեան բարձրացումը ներկայումս հանդիսանում
է սոցիալիստական գյուղատնտեսութեան կենտրոնական խնդիրը:
Մեր գաղտերի բերքատուութեան բարձրացման համար, շրջանում
կիրառվում է հետևյալ ագր. կուլտուր միջոցները, 33 թ. հիմք
է դրվել ցանքաշրջանառութեանը, առ 1-ն սեզոնների ցան-
քաշրջանառութեան և անցկացված 17 կոլխոզում, 2466,25 հեկ-
տար տարածութեան վրա, 7—8 դաշտյան տիպով, 20-50 տոկո-
սով հատկացնելով բամբակենու, այս աշխանից անց է կացվե-
լու Նարիմանլու, Ախամզալու, Յուվա, Վ. Ն. Ղամարուներ,
Բեջաղու, Ներազալիթ գյուղերում: Դրանով չի սահմանափակ-
վում բերքատուութեան համար կատարվելիք ձեռնարկումները,
դրա հետ միասին կատարված է պարատապում, վարը նուրբպես
բերքատուութեան բարձրացման հիմնական միջոցներից մեկն է
և հանդիսանում, պարատապում է կատարված հետևյալ չափերով՝

	1933 թ.	1934 թ.
Բ ա մ ք ա կ	533	8050
Ա ո վ ու լ տ	43	100

Բացի հանքային պարարտանութիւնից ոգտագործել է ք նաև
տեղական պարարտանութիւն (քոմազը, մոխիր, խոտնաղբ) ճե-
ղական պարարտանութիւնները նախորդ տարիներում ոգտագործվել
էն չափազանց քիչ քանակութեամբ, իսկ 1934 թվին Հողօգդե-
մատի կողմից պլան էր տրված 4200 տոննա պարարտանութիւն, կա-
տարված է 22619 տոննա, կամ պլանի 537 տոկոսը: Ըստ կուլ-

տարածանքի տեղական պարարտանյութերով պարարտացված են հետևյալ չափերով՝

ԿՈՒՆՏՐԱԿՏ	Պարարտանյութի քանակը տոններով	Վ Ե Ր Ի Յ	
		Ֆոսֆոր	Անհատ
Բամբակենի	19388	20626	762
Հացահատիկ և բանջ.	2100	1992	187
Ալգիններ	1053	966	87
Ընդամենը	22419	22583	1036

Բացի ցանքասարքանառությունից և պարարտացումից բերքավորության բարձրացման համար անհրաժեշտ է լավագույն վար, շարժացան, սերմազտում, ժամանակին ցանել մշակել և վորոզել, այս աշխատանքներն արդեն տարվում են մասսայական կերպով և համեմատած ագյալ տարիների հետ 1934 թ. նշած աշխատանքները՝ կատարված են անհամեմատ ավելի բարձր վորակական ցուցանիշներով, ագրոֆուլուր միջոցառումները ժամանակին և կանոնավոր կատարելու, 1932 թ. Գործադիր կոմիտեի կողմից ամեն պարի հրապարակված և պարտադիր ագրոֆանտներ, լեյնելով լուրաքանչյուր գյուղի նողային և ջրային պայմաններից:

4 ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

	1931 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.
Ցարածուծ.	2621	3651	3728	3762
միջինները ցինտ	—	—	49,45	62

Բամբակի հետ միասին խաղողագործությունը հանդիսանում է շրջանի հիմնական կուլտուրան, սակայն անցյալ տարիներում ալգինների մշակման ու զարգացման անհրաժեշտ ուղադրություն չի դարձվել, վորի հետևանքով մի շարք գյուղերում (Ողորենկու, Վ. Համարու, Բեջաղու, Ա. Դվին, Նովրդու և այլն), վորոշ քանակությամբ ալգիններ փչացել են, միայն վեր-

ջին տարիներում՝ մասնավորապես 1933 թվին հետակազեռ ընթացիք 1934 թվին, վոր հարկ լեղած ուղադրություն և պարձվում ալգինների մշակման ու զարգացմանը, խաղողի ալգինների տարածությունն ավելացել է կոլեկտիվներում հետևյալ չափերով՝

1932 թ.	1933 թ.	1934 թ.	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
30	52	31	1934 թվի գարնանը տնկել ենք 31 հեկտար բացի գրանից 34 թ. աշնանը լեղս տնկել ենք 31 հեկտար:

Ալգինների մշակումը հետևյալ պատկերն է ներկայացնում.

	1932 թ.	1933 թ.	1934 թ.
Ալգեփոր	68 տոկ.	70 տոկ.	97 տոկ
Ալգեթաղ	92 »	97 «	100 »

Համեմատաբար լավ մշակելու հետևանքով 34 թ. բերքը մեկ հեկտարից ստացանք 62 ցինտներ, իսկ վորոշ գյուղերում 90 ցինտներ, (Դեռաղատ, Գյուղաղու), 1933 թ. համեմատությամբ ավելի լե մոտ 19 ցինտներով, խաղողագործության հետ միասին հիմնական տեղ և զբաղում նաև պտղաբուծությունը, վորն ագրանքային լեյուլթի տեսակետից հանդիսանում է կոնսերվի արդյունաբերության բաղաններից մեկը, Շրջանում մշակված է մոտավորապես 16000 պտղատու ծառեր՝ 1931 թ. գարնանը տնկվել է 20,000 ծառ, իսկ աշնանը տնկել ենք 40 հեկտար: Ալգեգործությունը հիմնականում զարգանալու լե շրջանի նոր լուրացվող դոբրում, վորոնք ընկած են ընկ. ՍՏԱԼԻՆԻ անվան դոբրի վորոգման ջրանցքի տակ, բացի գրանից ալգեգործությունը զարգանալու լե նաև Արտաշատ, Նորաշեն, Ա. Դվին, Վ. Աղբալ, Ա. 4 գյուղ, Դիտաղ, Զանաթլու գյուղերում: խոշոր տեղապահներ են կատարվել նաև ալգեգործության հանրայնացման բնագավառում,

վորը ցույց է տալիս համապատասխան ազդեցության (հեկտարներով)

Ս Ե Կ Տ Ո Ր	1931 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.
Կոխոզ	1833,5	2420	2442	2477
Կոխոզնիկ	—	—	252	252
Մենատնտես	1767,5	1291	1123	983,4
Ընդամենը	3600	3651	3717	3729,4

Այսպիսով հանրայնացված այդ ոգտագործության անուժը նույնպես կոլեկտիվացման ընթացքին զուգընթաց մեր խնդիրն է ավելի մեծ ուղարկություն նվիրել այդգործության, վորը և նույն մշակութային վորակի բարձրացման միջոցով վոչ միայն նրա հետագա անցնելու, նոր այգիներ տնկելու ու բարձրացնելու լեղած այգիների բերք ա տ վ ու թ յ ու ն ը այն կոլտնտեսականի ունեւոր դարձնելու, կուտակցութայն յոգունգի կիրառման հիմնական ազդակներից մեկը: Կոլտնտեսությունների ախացման, բւլըր կոլտնտեսականների ունեւոր դարձնելու ուղղութլամբ ձեւը բերած նվաճումների հիմնական ցուցանիշներից մեկը կոլտնտեսությունների ընդհանուր լեկամուտների աճման չափն է, մեր ջրջանի կոլտնտեսականների ընդհանուր լեկամուտն ունի հետեւյալ պատկերը (հաշվելով ուրբլիններով):

1931 թվին	1932 թվին	1933 թվին
3,882,068	10,635,660	14,494,893

Իսկ 34 թվին բոլոր նախնական տվյալներն ինկատի ունեւալով, մենք 33 թվին հկատմամբ առանձին կոլտնտեսություններում ալդ աճը հասնելու լե 200—300 աղոսի:

Ընդհանուր լեկամուտի հետ միասին աճել է անբաժանելի դրամազուխը հետեւյալ չափով՝

1931 թ. 499,704, 1932 թ. 1,024,943, 1933 թ. 1,118,161.

Դրան զուգընթաց կոլտնտեսությունների յուրաքանչյուր աշխատանքային ուրի արժեքն ըստ տարիների աճել է հետեւյալ կերպ:

Ուրեկտներ	1931 թ.	1932 թ.	1933 թ.
Դրամով	3 ուրբ.	5—20 կ.	7-16 1/2 կ.
Վուրից մթերքով	1—35 է.	2—24 կ.	3—11 կ.

Թվենք հիմա մի քանի փաստեր, կոլտնտեսականների ըստացված բերքից, վորոնք գալիս են ապացուցելու ընկ. ՄՍԱԼԻՆԻ պատմական լեզունգը, կոլտնտեսականներին ունեւոր դարձնելու մասին—լեկտագործելու ուղղութլամբ մեր ձեւը բերած նվաճումները: Եւրուր դուգի կոլտնտեսական՝ ՉԱՅԱՐ ՄԱՄԵՆՈՎԸ մինչ կոլտնտեսությունն մտնելը լեղել է չքավոր աշխատավորաւական տնտեսություն, 1930 թվին մտել է կոլխոզ, կոլտնտեսությունն մտնելու ժամանակ լեքեք շունչ էր, լեկ այժմ հինգ շունչ է: Ունի լեքիու աշխատավոր ձեւը, 1933 թ. ունեցել է 380 աշխոր, վորի դիմաց ստացել է հացահատիկ 1290 կիլո, նույն աշխորի դիմաց ստացել է 700 խուրձ խոտ և բալըմ, 4000 կիլո ձմերուկ և աշխորին 1 ու. 50 կոպեկ դրամ, 1934 թ. ունի 300 աշխոր, վորի դիմաց ստանում է 1500 կիլո հացահատիկ, 1500 կիլո չալթուկ, 1500 կիլո ձմերուկ և յուրաքանչյուր աշխորին 3 ուրբլի կանխիկ դրամ, կոլխոզ մտնելուց առաջ ապրելիս է լեղել, մեկ խաբուրդ սենյակում, կոլխոզ մտնելուց հետո պատրաստել է լեքկու լուսավոր սենյակ, մեկ միջանցքով, գնել է մեկ կով, 2 հատ գորգ, 1 սեղան, 2 թախտ, 2 կարպետներ, նոր պատրաստել է 3 ձեւը տեղաշոր, ունեն 5 հատ սրբիչներ, լեքը և իր ընտանիքը հաղնված են կուլտուրական ձեւով:

Դոնգուգանի կոլտնտեսական Հաշիմ Փաշա ողլին մինչ կոլտնտեսությունն մտնելը 10 տարի անընդհատ լեղել է բաւրակ: 1930 թ. մտել է կոլտնտեսություն: 1933 թ. ունեցել է 300 աշխոր: 50 շունչ են, 2-ն աշխատավոր, ստացել է 500 կիլո հացա-

հատիկ, 1600 կիլո չափով, 2400 կիլո ձմերուկ, 6000 խուրձ խտ. 1934 թ. ունի 200 աշխուր, ստանում է հացահատիկ 1450 կիլո, 2329 կիլո չափով, 1450 կիլո ձմերուկ և աշխուրին 2 ու կանխիկ գրամ: Կոլխոզ մտնելուց հետո կտուցել է 1 սենյակ, գնել է 1 պահարան, 1 մատակ, 1 հատ պատեֆոն, 2 հատ գորգեր, 4 աթոռ, 1 սեղան, 2 թախտ, 3 ձեռք նոր տեղադրեր:

Գյուղաքուլի կոլտնտեսական, Արմենակ Մխրթարյանը տարիների ընթացքում յեղել է գյուղի բաղադր, 1933 թ. մտել է կոլտնտեսություն, 1933 թ. ունեցել են—ինքը և կիներ 353 աշխուր, այդ աշխուրի դիմաց ստացել են 2444 կ. հացահատիկ, 66,5 դուլլ գինի, 16 դուլլ գոշաբի շիբա, 48 կիլո փշառ, խաղող կախանի համար 287 կիլո: Բացի այդ իր սննդի ալգուց ստացել 1900 կիլո խաղող: 1933 թ. ամեն մեկ աշխուրին դրամով և մը թերքի հետ միասին ստացել է 22 ու 30 կոպեկ, 1934 թ. ունի 250 աշխուր, այդ աշխուրի դիմաց ստանում է հացահատիկ 1750 կիլո, գոշաբի շիբա 37 ու կես դուլլ, գինի 37 ու կես դուլլ, փշառ 61 կիլո, խաղող 500 կիլո: Իր սննդի ալգուց ստացել է 3700 կիլո խաղող, այս տարի ամեն մեկ աշխուրին սպասվում է 35—40 դուլլի մթերքով և գրամով:

Նույն կոլտնտեսության տնտես Աչո Գողոսյանը յեղել է չքավոր աչրի կին, իր 15 տարեկան յերեխային հետ 30 թ. մտել է կոլտնտեսություն, 1933 թ. ինքը և իր յերեխան ունեցել են 247 աշխուր, վորի դիմաց ստացել են 935 կիլո հացահատիկ, 35 դուլլ գինի, 16 ու կես գոշաբի շիբա և խաղող կախանի համար 182 կիլո: Բացի այդ իր սննդի ալգուց ստացել է 1000 կիլո խաղող, 1934 թ. ունի 190 աշխուր, վորի դիմաց ստանում է 1320 կիլո հացահատիկ, 28 դուլլ գինի, 28 դուլլ գոշաբի շիբա և խաղող 350 կիլո, այժմ կոլտնտեսություն մտնելուց հետո գնել է 2 մանձակալ, 1 կով, 1 ռադիո և պատրաստել է մաքուր բնակարան:

Վերսկիլված աղյուսակները և փաստերը ցույց են տալիս, վոր 1931 թ. համեմատությամբ 1933 թ. կոլխոզների ընդհանուր յեկամուտն աճել է 10,722,825 անբաժանելի գրամով: Ինքը և իր յերեխան ունեցել են 688367 դուլլով և յուրաքանչյուր աշխուրի արժեքը աճել է 2,4 դուլլով, և 161 ու 2 կոպեկով ու 2,8 կիլոգրամ հացահատիկով:

Այսպես փաստերը ալոր են ցույց տալիս յերեխային են մեր կոլտնտեսությունների մեծ մասում: Այս թվերն ապացուցում են, վոր կոլտնտեսության ու կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ քաղբաժինների կազմակերպումը:

կուս և յորհրդային աշխատանքների վերակառուցումը գյուղում, կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին տրված արտոնությունները և պետական պարտավորությունների հատարումը կոլտնտեսությունները հաստատուն ու վճարակներ են կենսագործում են կուսակցության հանձարեղ առաջնորդ ընդ. ՍՅԱԼԻՆԻ պատմական լողունքը, բոլոր կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան, բոլոր կոլտնտեսականներին դարձնել ունեվոր:

Մեր խնդիրն է ել ազնի համառ անհալտ պայքար ծավալել կոլտնտեսությունների հետագա ամրացնան ու աճման համար:

5. ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Անանապահության դարգացման րնագավառում կուսակցության ու կառավարության դերեկտիվներին հիման վրա, հատկապես կուսակցության 17-րդ համագումարի դերեկտիվների հիման վրա ձեռք ենք առել մի շարք միջոցներ և պետք է ասել, առայժմ դեռ ունենք անբավարար ցուցանիշներ:

Անանապահության դարգացումը վերջին տարիների ընթացքում մեր շրջանում տալիս է հետևյալ պատկերը:

Անասունների տեսակը	1932 թ.			1933 թ.			1934 թ.		
	կոլխոզ	կով.	Անհատ	կոլխոզ	կով.	Անհատ	կոլխոզ	կով.	Անհատ
Չիեր 1—4 տ. և բարձր	888	53	446	423	95	557	422	68	373
Բուռուկներ 6 ամս. 1 տարեկ.	22	8	44	13	15	128	40	12	85
Ցեղ և գոմեշ 2—4 և բարձր	889	161	1214	902	49	1192	1116	24	1031
Կով-մատ. 2—3 տ. և յեր.	110	314	659	80	3656	2776	145	704	541
Հորթեր 6 ամս. 1 տ.	15	422	414	76	2293	1979	104	3381	1427
Մանր յեղջուրավոր անասուն.	899	6300	5880	534	12298	9441	1019	10270	64276

Ինչպես տեսնում ենք այս աղյուսակում, մեզ մոտ անասնապահության զարգացումը ընթացել է չափազանց դանդաղ կերպով, այդ մասնակի կերպով բացատրվում է նրանով, վոր հարկ չեղած ուշադրություն չի դարձրված անասնաբուժության զարգացման, բեղմնավորման կամայանիային, մատղաշներին խնամքին և այլն

Այս դրությունը ինչ կասկած ալժմ չկա և չպետք է լինի մեր աշխատանքներում, ինչպես պահանջում է կուսակցությունը և մեզ հետ, անասնապահության զարգացումը պետք է լինի մեր վորջ կուսակցական կազմակերպությունների, մեր գյուղատնտեսական կազմակերպությունների, կուսակցության, կառավարության վորջումների հիման վրա ալժմ կազմակերպված է հող-բաժնին կից անասնապահական սեկտոր, վորը կազմակերպել է մի շարք գործնական միջոցառումներ անասնապահության զարգացման ուղղությամբ. կազմակերպված է բեղմնավորման կայաններ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս բեղմնավորման աշխատանքների կատարման ընթացքը:

Անասունների տեսակը	Կուխոգ		Կուխոգնիկներ		Մենատեսակ	
	Քանակ	տոկ.	Քանակ	Տոկ.	Քանակ	Տոկ.
Զամբիկ	84	68,24	24	64,84	194	60,9
Կովեր և մատակներ	118	90	3388	78,77	2082	90,71

Բեղմնավորման կամայանիան զգալի չափով դանդաղում է, վորակավոր հովատակների և ցուլերի պակասության պատճառով: Շրջանում ունենք արտադրելովատակ 6 հատ, կովացու 70 հատ, գոմեշացու 44 հատ, վորոնք չեն ապահովում բեղմնավորման գործը:

Այդ բացը վերացնելու նպատակով 1935 թ. ցուլեր ձեռք բերելու համար տեղերին իջեցրված է համապատասխան պլան և պետք է պալքարել բոլոր գյուղերում, կուսակցական կայաններում և բարձրորակ արտադրողներին հորթերով և կովերով ապահովելու գծով նույնպես մենք զգալի աշխատանք ենք կատարել, մեր շրջանին ալժ նպատակի համար վարկ է բաց թողնված 1933 թ. 6400 ուրլի, իսկ 1934 թվին 13250 ուրլի, Այդ պլանը կատարվածն հետևյալ չափերով՝

Կովազուրկ կուխոգնիկների թիվը	1933 թ.		1934 թ.	
	Պլանը	Կատարվ.	Պլան	Կատարվ.
1548	200	158	652	47

Ինչպես տեսնում ենք պլանը խախտակ կերպով թերակատարվել է, շնորհիվ մի շարք գյուղատնտեսական, կուսակցական կազմակերպությունների անտարբեք, թերազնաատգ վերաբերմունքի կուսակցականներին հորթերով ապահովելու գործին (Զանաթիլու, Թարփոխիլա, Թափաթաշ, Նորադավիթ, Վ. Ղամարլու):

Անասնապահության զարգացման ուղղությամբ խոշոր տեղ և դրավում նաև անասուններին կերով գոմերով ապահովելու գործը, վերջին 2 տարվա ընթացքում մեր կուսակցական կազմակերպություններում կառուցվել և ավարտված են 31 նոր լուսավոր գոմեր, 1040 անասունների համար: Անասուններին կերով ապահովելու գործը նույնպես պահանջում է մեծ ուշադրություն: Բացի լեռնային 3-4 գյուղերից մեր դաշտային գյուղերում անասունները բնականորեն արմար ապահովված են անասնակերով, մենք է միայն ուսուցիչներով կերպով ոգտագործել կերը, ինչպես յեվ կանոնավորել խոտաբերներին յեվ արտատողների ոգտագործումը դրահետ միասին մեզ անհրաժեշտ է մտածել նաև պլանայինը ստեղծել լեռնային գյուղերում անասնապահության զարգացման համար, ալժ ուղղությամբ պետք է մտածեն թի մեր հողաբաժնի աշխատողները յեվ թի մեր գյուղատնտեսները:

ԳՅՈՒՂԱՏՆՏՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՔՆԱՑԱՑՈՒՄԸ

Դյուղատնտեսության նրա սոցիալիստական վերակառուցման զարգացման համար խոշոր նշանակություն ունի մի քանի ցուցանիշներ: Դրանց համար մեր շրջանում կազմակերպված է 1930 թվին ՄՏԿ-կայան, վորը հզոր աղյակ է հանդիսացել հանդիսանում կուսակցական կազմակերպությունները առնալից թափով ստեղ շարժելու համար Մերենայացման ընթացքը ցույց է տալիս հետևյալ աղյուսակը:



ՏՐԱԿՏՈՐԱԹԻՆ ՊԱՐԿԸ .—

	1931 թ.	1932 թ.	1933 թ.	1934 թ.
Մերենաների տեսակները	քանակը հատեր.	քանակը հատեր.	քանակը հատեր.	քանակը հատեր.
Ս. Յ. Ձ. 15 30	26	26	42	57
Ինտերն. ամերիկյան 20 36	6	6	8	8
Ինտերն փոքր 10 20	9	9	—	6
Ինտերն Արհր. 15 30	2	2	—	—
Ֆորզոն 10 20	2	2	8	8
Ձ. Տ. Ձ.	2	3	—	2
Ֆորմուլներ 10 20	—	—	—	6
Ընդամենը	45	45	48	77

ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՑՄՐԵԹՎԵՐԻ
(ՀԵԿՏԱՐՆԵՐՈՎ.)

Կատարված աշխատանքը	1931 թ. Հեկտ.	1932 թ. Հեկտ.	1933 թ. Հեկտ.	1934 թ. Հեկտ.
Վար	—	6678,22	919,37	2400
Կրկնավար	—	955,88	15,0	354
Փոցխ	—	5450,6	368,25	2025
Դիսկ	—	685,92	—	40,5
Ցանքս բամբակի	—	213,75	25	174,75

ԳՅՈՒՂԱՑՆՑԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ (ՏԵՍ ՀԱՄԱՊԱՏԱՍ.
ԽԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ)

Գործիքների տեսակները	1931 թ. Հատերով	1932 թ. Հատերով	1933 թ. Հատերով	1934 թ. Հատերով
Ցուրման վահուս	—	—	13	17
Մալախիթ	—	—	8	5
Խուրճ կապոզ և բաղոզ	—	—	6	6

Մ. Յ. Կ. Կ. ունենալ ագրո արտադրական շրջան, վորին ամբա-
ցված եր տրակտորները մինչև 34 թ. դարնանը, վերակառուց-
ման հետեվանքով կադմակերպված և անդերում 10 ագրոմբակ-
ներ, վորոնք ընդգրկում են ամեն մեկը 4-8 կոլտնտեսություն-
ներ, հնարավորություն և տրված ագրոմբակներին ագրոնոմ-
ներ, կոլտնտեսային արտադրությունը, ուժեղացնելով ամենորյա
ոպերատով ղեկավարությունը: Հնթացիք տարում Մ. Տ. Կ. Կ. ու-
նի հետեվալ շինարարությունները, կառուցված և Ուլուխանյու-
լում պարարտանյութի մեկ պահեստ, կառուցվում և Համարյու-
լում ևս մեկ պահեստ պարարտանյութի համար, աշխատանքնե-
րն ավարտվում և, կառուցված և 1938 թ. աշնանը մեկ նավեղ
արակտորների համար, կառուցվում և ևս լեբկու նոր նավեղներ.
Հնայած նրան, վոր պետք և կառուցվեր բնակելի շինքեր, այդ
աշխատանքը դանդաղ և ընթանում և նույնը արհեստանոցի կա-
ռուցումը, այդ դանդաղումը հետեվանք և շինարարության վար
կերը ժամանակին բաց չթողնելու: Բացի այդ ՄՏԿ-ն մեր կողմն
տեսություններում ևս գյուղգործիքներով զգալի չափով ուժան-
գակել և նաև Սելխոզանարի բաժանմունքը, վաճառված և կոլ-
տնտեսություններին հետեվալ գյուղ գործիքները:

№ №	Գյուղ գործիքի տեսակը	1932 թ.	1933 թ.	1934 թ.
1	Շարքացաններ բամ.	70 հատ	25 հատ	35 հատ
2	Գուլաններ գոնալ	54 »	76 »	5 »
3	Խոտհարքի շարքացան	2 »	—	—
4	Ցորենի	10 »	8 »	5 »
5	Ձանազան գյուղ գործ.	950 »	55 »	32 »
6	Բերչկաներ	75 »	150 »	160 »

ԿԱՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Մենք նախորդ բնագավառներում, խոսեցինք մի շարք աշ-
խատանքների կատարման մասին, լես կարծում եմ կարևոր և
փոքր չափով կանգ առնել մեր շրջանի կադրերի պատրաստման
ուղղությամբ: 1931 թվին մենք ունեյինք 48 արակտորիսաներ,
իսկ 1934 թվին ունեյինք 79 արակտորիսաներ, 84 թ. մենք պա-

տարածել ենք 34 կին բրիգադիրներ, իսկ ընթացիք տարում
մենք կազմակերպել ենք բրիգադիրներին դպրոց, վորտեղ սովորում են 50 հոգի: Կենսագործկանի վորոշման հիման վրա մենք 33-թ, կազմակերպեցինք գյուղխորհուրդի նախագահներին և քարտուղարներին պատրաստման և վերապատրաստման մեկ ամսվա կուրսեր, վորտեղ սովորեցին և ավարտեցին 16 գյուղխորհուրդի նախագահներ և 13 քարտուղարներ, 33 թվին կազմակերպեցինք տուրման վակուսիտների մեկ ամսյա կուրսեր, վորտեղ սովորեցին և ավարտեցին 33 հոգի, բացի մեր շրջանի տուրման վակուսիտների պատրաստումներից մենք նաև 8 հոգի տուրման վակուսիտներ պատրաստեցինք Վաղպատի համար: Կուտնտեսության մեջ մեր ակտիվ աշխատակցերը մեր արտադրական պլանների կատարման և նորմաների համար շրջանի բոլոր կուտնտեսություններում ամեն տարի կազմակերպում ենք բրիգադիրներին պատրաստման և վերապատրաստման կուրսեր, 33 թվին այդ կուրսերում մասնակցել են 450 հոգի: Այժմ աշխատում են, վորպես բրիգադիրներ, 35 թվին այդ կուրսերում մասնակցել են 325 հոգի, և չհաշվելով դրա մեջ կուտնտեսությունների ակտիվը, վորտեղ ակտիվ կերպով մասնակցել են այդ կուրսերին: Մենք բացի շրջանում կազմակերպված կուրսերից ուղարկել ենք և զանազան կուրսեր այլ շրջաններում և կենտրոններում: Վարչարարական տրամադրությունների կուրսեր, Վեդիլում գյ. խ. նախագահի կուրսեր, Յերեվանում և Լենինականում հաշվապահական և այլ կուրսեր:

Այսպեսով, ինչպես պուլը են տալիս թվեր կուրսերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ բավական գործ ենք կատարել սակայն դրանով հանդստանալ խնդրել է ինքին: Մեզ անհրաժեշտ և շարունակել այդ պատրաստման հետևում և հատուկ պարտականություն դնելով աշխատանքի վորակի վրա:

6. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Առանձնապես վիթխարի յեն մեր նվաճումները լուսավորության ֆրոնտում: Հաշվետու ժամանակաշրջանը մեզ մոտ և առանձնապես դպրոցական շինարարության հույսերով և շինարարության վերելքի շրջան էր, բավական և միայն մի քանի թվեր, այդ տարիների համար վորպեսզի ապացույց լինի այդ վերելքը, 1924—28 տարիներում գործընթացում ընդգրկված էին

